2021, № 2, 70-81 *Քաղաքագիտություն*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.2.070

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԷԼԻՏԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ 2008-2018 ԹԹ.

ՆԱՐԵԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հոդվածն ուսումնասիրում է Հայաստանի քաղաքական էլիտայի անվտանգության ընկալումները 2008 թ. ռուս-վրացական պատերազմի ժամանակաշրջանից մինչև ապրիլյան պատերազմը, մինչև 2018 թվականը՝ օգտագործելով կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն և անվտանգության ինքնության հայեցակարգ: Ուսումնասիրությունը հիմնված է ելույթների, իշխող վերնախավի հետ հարցազրույցների, կառավարության ծրագրերի և համապատասխան փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ իշխող կուսակցության նախընտրական ծրագրերի վրա՝ բացահայտելով դրանց ընկալումը կառուցվածքային գործոնների վերաբերյալ (ներկառուցվածքային, տարածաշրջանային անվտանգ, գլոբալ համակարգային), որոնք ազդում են Հայաստանի արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա: Հոդվածում նշվում է, որ ի սկզբանե վերնախավը հարևանների հետ հարաբերությունների կարգավորումը համարում էր ներքին կառուցվածքային խոցելի կողմերը հաղթահարելու միջոց: Այս ուղղությամբ ջանքերի ձախողումը հանգեցրել է ԵՄ-ի՝ որպես արդիականացման և տարածաշրջանային կայունության միջոցի աճող կարևորության: Քանի որ այս միտումը չարդարացրեց սպասելիքները, իշխող էլիտայի կարծիքով, Ռուսաստանի անփոխարինելի դերի վերաբերյալ համոզմունքը վերականգնվեց: Ակնկալվում էր, որ Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը կբարձրացնի Հայաստանի անվտանգությունը Ռուսաստանի տարածաշրջանային անվտանգության հովանու ներքո, բայց Ռուսաստանի կողմից Ադրբեջանին զենքի վաճառքի ավելացումը խթանեց իշխող էլիտայի դժգոհությունը, որն ավելի ակնհայտ դարձավ 2016 թ. ապրիլյան պատերազմից հետո:

Բանալի բառեր – *ՀՀ արտաքին քաղաքականություն, ՀՀ-ՌԴ հարաբերություններ, կոնստրուկտիվիզմ, անվտանգային ինքնություն, խոսույթի վերլուծություն, ՀՀ կառավարող էլիտա*

Միջազգային հարաբերությունների տեսաբաններից կոնստրուկտիզմի դպրոցի ներկայացուցիչները պնդում են, որ միջազգային համակարգի կառուցվածքն ու պետությունների ինքնությունը հարկավոր է դիտարկել դիալեկտիկ հարաբերությունների մեջ, քանի որ դրանց ձևա-

վորումը տեղի է ունենում փոխազդեցությունների արդյունքում[1]: Նման հոլիստիկ մոտեցումը հուշում է, որ համակարգի կառուցվածքը ազդում է պետությունների առաջնորդների աշխարհընկալման վրա, իսկ դա իր հետքն է թողնում նրանց արտաքին քաղաքականության վրա: Հայկական պետականության երկարատև բացակայության պայմաններում արտաքին համակարգային սպառնալիքի հավասարակշռման անհրաժեշտությունը նպաստել է երրորդ կողմի օգնությանը ապավինելու ինքնության ձևավորմանը[2]: Նախորդ երեք դարերի ընթացքում հավաքական ինքնության մեջ այդ ապավենի դերում են եղել հիմնականում Ռուսաստանը և մասամբ եվրոպական պետությունները: Անկախ պետականության հաստատումից հետո ևս միջազգային համակարգի մասին ընկալումները շարունակել են նշանակալի տեղ զբաղեցնել ՀՀ կառավարող էլիտաների արտաքին քաղաքականության ձևավորման մեջ: Ինքնության և դերերի «մեկնաբանման ազատությունը»[3] հնարավորություն է տալիս ուսումնասիրելու կառավարող տարբեր էլիտաների ընկալումների և դրանցից բխող արտաքին քաղաքականությունների փոխակերպումներն ու շարունակականությունը: Այդպիսով, այս հոդվածի նպատակն է վեր հանել 2008-2018 թթ. (ռուս-վրացական պատերազմից մինչև Ապրիլյան պատերազմին հաջորդած շրջանը) ՀՀ կառավարող էլիտայի վերաբերմունքը ՀՀ արտաքին անվտանգության քաղաքականության վրա ազդող կառուցվածքահամակարգային գործոններին և գնահատել դրանց ազդեցությունը ՀՀ արտաքին անվտանգության քաղաքականության ձևակերպման վրա, մասնավորապես հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում: Ըստ այդմ՝ դրված է նշված ժամանակահատվածում, այն է Ապրիլյան պատերազմով պայմանավորված անվտանգային միջավայրի փոփոխությանը նախորդող և հաջորդող շրջանում, էլիտայի արտաքին-անվտանգային քաղաքականության ընկալումների էվոլյուցիան պարզելու խնդիրը, որի շրջանակում վեր են հանվելու ընկալումների, վերաբերմունքների փոփոխությունները և դրանց ազդեցությունները պետության արտաքին անվտանգության քաղաքականության վրա:

Անվտանգային միջավայրի փոփոխությամբ պայմանավորված ժամանակագրական ընդգրկումը համընկնում է Սերժ Սարգսյանի նախագահության երկրորդ ժամկետի հետ ու հարուստ նյութ է տալիս ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության ուսումնասիրման համար: ՌԴ-ի հետ իրադարձություններով լի հարաբերությունն-

---

[1] Տե՛ս **Wendt A.,** Social Theory of International Politics, Cambridge: Cambridge University Press, 1999, էջ 26-27, 147-150:

[2] Տե՛ս **Astourian S.,** From Ter-Petrosian to Kocharian: Leadership Change in Armenia, Berkley: University of California, 2000; **Ishkhanyan R.,** Armenia at the Crossroads: Democracy and nationhood in the post-Soviet era in ed. Libaridian G., The Law of Excluding the Third Force, Watertown, Mass.: Blue Crane Books, 1991:

[3] Տե՛ս **Wendt A.,** նշվ. աշխ., էջ 227-228:

րի համատեքստում առանձնակի փորձառական (էմպիրիկ) արժեք է ներկայացնում կառավարող էլիտայի հանրային խոսույթի էվոլյուցիան՝ որպես էլիտայի ինքնությունն ուսումնասիրելու միջոց և կոնստրուկտիվիստական հետազոտության տվյալային բազա: Դրանց զուգադրումն ու վերլուծությունը թույլ է տալիս բյուրեղացնել մի կողմից կառավարող էլիտայի արտաքին քաղաքական ընկալումներն ու վերաբերմունքը, մյուս կողմից՝ վեր հանել դրանց ազդեցությունն արտաքին քաղաքականության վրա:

Ըստ այդմ՝ առաջ ենք քաշում հետևյալ հարցադրումները՝ ինչպե՞ս է ՀՀ կառավարող էլիտան ընկալել ՀՀ արտաքին անվտանգության քաղաքականության ռուսական ուղղության վրա ազդող կառուցվածքահամակարգային գործոնները 2008-2018 թթ., փոփոխվե՞լ են արդյոք և ինչպե՞ս են փոփոխվել այդ ընկալումները, վերաբերմունքը նշված ժամանակամիջոցում տեղի ունեցած անվտանգային միջավայրի փոփոխության լույսի ներքո, ինչպե՞ս է ազդել այդ ընկալումը, վերաբերմունքը ՀՀ արտաքին անվտանգության քաղաքականության ռուսական ուղղության վրա: Հետազոտությունը հիմնվում է կառավարող էլիտայի հրապարակային ելույթների, հարցազրույցների, Կառավարության ծրագրերի, 2007 թ. Ազգային անվտանգության ռազմավարության[4] և այդ էլիտան ներկայացնող ՀՀԿ-ի նախընտրական ծրագրերի վրա: Մինչ արտաքին քաղաքականության ռուսական ուղղությանն անցնելը կարևոր ենք համարում ներկայացնել տարածաշրջանային և գլոբալ համակարգային գործոնների նկատմամբ կառավարող էլիտայի վերաբերմունքի էվոլյուցիան, քանի որ դրանց վերլուծությունը վեր է հանում ընկալումների այն համատեքստը, որը պայմանավորում էր ՌԴ-ից Հայաստանի կախվածության և ՀՀ-ՌԴ փոխհարաբերությունների նկատմամբ կառավարող էլիտայի վերաբերմունքը:

Հայաստանի արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա ազդող գործոններից նախորդ հետազոտություններում սահմանել էինք կառուցվածքահամակարգային գործոնների երեք մակարդակներ՝ ներքին կառուցվածքային, տարածաշրջանային-համակարգային և գլոբալ կառուցվածքային[5]: Դրանցից ներքին կառուցվածքային գործոնները բնութագրվում են խոցելիության, ծովային ելք չունեցող փոքր պետության հատկանիշներով: Սարգսյանն իր նախագահական ժամկետն սկսեց Հայաստանի զարգացումը խոչընդոտող կառուցված-

---

[4] Թեև ռազմավարությունը հաստատվել Ռոբերտ Քոչարյանի նախագահության ընթացքում, 2008 թ. Կառավարության ծրագրի «Արտաքին քաղաքականությունը» բաժինը չի մանրամասնում սեփական ծրագրերը, փոխարենը դրանում նշվում է, որ այն կիրականացվի 2007 թ. ռազմավարության հիմնադրույթների համաձայն:

[5] Տե՛ս **Ն. Սուքիասյան,** ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա ազդող կառուցվածքային գործոնների տեսականացման փորձ և այդ գործոնների ազդեցության էվոլյուցիան, «Գիտական Արցախ» Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում, № 4(7), 2020, էջ 62-63:

քային գործոնների գիտակցմամբ, սակայն պետության modus operandi-ն գոյատևումից դեպի զարգացում շրջելու մտադրությամբ (President.am, 2008)։ Պետության շրջափակումը և հաղորդակցության ուղիների սակավությունն էլիտայի կողմից ընկալվում էին պետության զարգացմանը խոչընդոտող գործոններ[6]։ Այս էլիտայի համար «արագ փոփոխվող աշխարհին» ի սկզբանե ընկալվում էր որպես նման խոչընդոտների հաղթահարման հնարավորություն[7]։

Վերը նշված հետազոտության շրջանակներում կառուցվածքահամակարգային գործոնների երկրորդ մակարդակը տարածաշրջանային-համակարգայինն է։ Ըստ որոշ կարծիքների՝ 2008 թ. ռուս-վրացական պատերազմն ստիպեց կառավարող էլիտային Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման միջոցով վերափոխել տարածաշրջանային համակարգի կառուցվածքը[8]։ Ըստ Թերզյանի՝ փորձ արվեց վերաձևակերպել արտաքին քաղաքական ինքնությունը և լուծել Հայաստան-Թուրքիա հակամարտությունը[9]։ Կար ընկալում, որ այդ քայլով Հայաստանի արտաքին քաղաքականության ռուսական ուղղությունը կդառնար ավելի ճկուն[10]։ Սակայն «ֆուտբոլային դիվանագիտության» տապալումը «գրողի ծոցն ուղարկեց» կարգավորմանն ուղղված արձանագրությունները[11], ինչպես նաև տարածաշրջանային կառուցվածքում Թուրքիայի դերի վերանայման քաղաքականությունը պայմանավորող ընկալումները։ Ըստ որոշ հեղինակների՝ էլիտայի շրջանակներում Թուրքիան սկսեց ընկալվել որպես անվստահելի գործընկեր, ռազմատենչ, կայսերական և «նոր օսմանական» նպատակներ հետապնդող ուժ[12]։

Ադրբեջանական գործոնի նկատմամբ Սարգսյանի ընկալումները տարբերվում էին Քոչարյանի ընկալումներից նրանով, որ Սարգսյանը չէր տեսնում «էթնիկ անհամատեղելիության» խնդիր, որը հակամար-

---

[6] Տե՛ս Таможенный союз не имеет для нас смысла. Премьер Армении о взаимоотношениях с РФ, Коммерсантъ, 04.04.2012, https://www.kommersant.ru/doc/1908052, դիտվել է 5.2.2021; **Gasparyan A.,** The Armenian Political Elite's Approaches and Beliefs in Foreign Policy, in ed. Kakachia, Kornely; Markarov, Alexander, Values and Identity as Sources of Foreign Policy in Armenia and Georgia, Tbilisi: Universal, էջ 219; Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիրը, 16 մայիս 2013, https://www.gov.am/files/docs/1149.pdf; Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիրը, 19 մայիս 2014, https://www.gov.am/files/docs/1321.pdf:

[7] Տե՛ս Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիրը, 21.01.2008, «Հետք» hetq.am/hy/article/31774, դիտվել է 5.2.2021:

[8] Տե՛ս **Ռ. Գիրազոսյան,** Տարածաշրջանային զարգացումները և Հայաստանի ազգային անվտանգությունը, «21-րդ դար», 2009, էջ 74:

[9] Տե՛ս **Terzyan A.,** The Evolution of Armenia's Foreign Policy Identity: The Conception of Identity Driven Paths. Friends and Foes in Armenian Foreign Policy Discourse, in ed., , in ed. Kakachia, Kornely; Markarov, Alexander, Values and Identity as Sources of Foreign Policy in Armenia and Georgia, Tbilisi: Universal, էջ 170:

[10] Տե՛ս **Gasparyan A.,** նշվ. աշխ., էջ 188:

[11] Տե՛ս Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում 24.09.2014, president.am/hy/statements-and-messages/item/2014/09/24/President-Serzh-Sargsyan-UN-New-York-speech/, դիտվել է 5.2.2021:

[12] Տե՛ս **Terzyan A.,** նշվ. աշխ., էջ 175:

տության լուծման ավելի մեծ հնարավորություն էր թողնում[13]: Սարգսյանի նախագահության առաջին տարիներին քայլեր էին ձեռնարկվում նաև Արցախյան հակամարտության և Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Դրանցից հատկանշական է 2011 թ. Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը, որտեղ ակնկալվում էր որոշակի առաջընթաց: Ինչպես հետագայում պարզ դարձավ, հայկական կողմը չէր հրաժարվել կազանյան փաստաթղթի ստորագրումից[14]: Հակառակ հակամարտության փոխզիջումային լուծման մասին Սարգսյանի հնչեցրած դիրքորոշումների կամ քայլերի[15]՝ հայկական մասնագիտական շրջանակներում առկա է այն կարծիքը, որ դրանք պայմանական դեր էին խաղում՝ կարծելով, որ Ադրբեջանի ոչ կառուցողական մոտեցումը կարող է տապալել նման ելքը[16]:

Ընդհանրացնելով կարող ենք արձանագրել, որ այս փուլում Ադրբեջանի լայնամասշտաբ վերազինման և ռազմատենչ հռետորաբանության հետրանքով կառավարող էլիտայի շրջանում ի չիք դարձան հարաբերությունների կարգավորման հեռանկարների սպասելիքները, և սրվեցին անվտանգային սպառնալիքի մասին ընկալումները[17]: Այսպիսով՝ եթե 2008 թ. կառավարող էլիտայի համար փոփոխվող աշխարհը ներկայանում էր որպես հնարավորություն, ապա առնվազն 2013-2014 թթ. սկսած՝ էլիտայի համար «արտաքին աշխարհի էական անորոշությունները» ձեռք բերեցին սահմանափակող գործոնի նշանակություն[18]:

ՀՀ արտաքին քաղաքականության կառուցվածքահամակարգային գործոններից վերջինը գլոբալ կառուցվածքայինն է[19]: Անմիջական հարևանությունյամբ տարածաշրջանային կառուցվածքի փոփոխման փորձի ձախողումն ստիպեց կառավարող էլիտային հայացքը թեքել դեպի

---

[13] Տե՛ս Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում, 2.10.2013, https://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/10/02/President-Serzh-Sargsyan-participated-at-the-session-of-the-PACE-speech/, դիտվել է 5.2.2021:

[14] Տե՛ս Էդվարդ Նալբանդյանի խոսքը և պատասխանները լրագրողների հարցերին Սերգեյ Լավրովի հետ համատեղ մամլո ասուլիսին, 22.04.2016, https://www.mfa.am/hy/press-conference/2016/04/22/min-russian-federation-fm/6057, դիտվել է 5.2.2021:

[15] Տե՛ս Նախագահ Սերժ Սարգսյանը ԵԽԽՎ լիագումար նիստում պատասխանել է վեհաժողովի անդամների հարցերին, 2.10.2013, https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2013/10/02/President-Serzh-Sargsyan-answered-the-questions-of-PACE-members/, դիտվել է 5.2.2021; Սերժ Սարգսյան. հայկական կողմերը պատրաստ էին վերադարձնել 7 շրջան, 22.4.2020, https://www.aniarc.am/2020/04/22/serzh-sargsyan-kiselev-interview-7-occupied-territories/, դիտվել 5.2.2021:

[16] Տե՛ս **Հ. Խալաթյան,** «Լեռնային Ղարաբաղ. բանակցությունների իմիտացիա և բռնության պարույր», Սպուտնիկ Արմենիա, 29.7.2015, https://armeniasputnik.am/analytics/20150729/268927.htmlhttps://armeniasputnik.am/analytics/20150729/268927.html, դիտվել է 5.2.2021:

[17] Տե՛ս **Ս. Սարգսյան**, «Դեպի ապահով Հայաստան» նախընտրական ծրագիր, 2013, www.hhk.am/u_files/file/election-programm-FINAL2013%20(1).pdf, դիտվել է 5.2.2021:

[18] Տե՛ս **ՀՀ Կառավարության ծրագիրը**, 2013, էջ 9; 2014, էջ 6:

[19] Տե՛ս **Ն. Սուքիասյան**, նշվ. աշխ., էջ 67-70:

Արևմուտք, մասնավորապես դեպի ԵՄ: Կառավարող էլիտան ողջունում էր առանց անդամակցության եվրաինտեգրման ուղին և վերաբերվում ԵՄ-ի Արևելյան գործընկերությանը որպես ՀՀ բարեփոխումների միջոցի[20]: Ինչպես Քոչարյանը, այդպես էլ Սարգսյանը Եվրոպան համարում էին Հայաստանի քաղաքակրթական-արժեքային ընտրությունը: Սարգսյանի նախագահության առաջին ժամկետում Հայաստանը բռնեց «լուռ եվրոպականացման» ուղին[21]: Դա նշանակում էր, որ կարճ ժամանակում և մեծ արագությամբ ՀՀ օրենսդրությունը մոտարկվեց ԵՄ-ի acquis communautaire-ն, սակայն, ի տարբերություն Ուկրաինայի, Վրաստանի կամ Մոլդովայի, գործընթացը տեղի էր ունենում առանց դրա արտաքին կամ ներքին լայն հանրայնացման: ԵՄ-ի հետ ինտեգրացիոն համագործակցության խորացումը դիտվում էր որպես պետության արդիականացման, ներքին կարողությունների ամրապնդման ու կառուցվածքային խոցելիության հաղթահարման մոդել և միաժամանակ դրան հասնելու համար անհրաժեշտ աջակցության աղբյուր[22]: Բացի այդ, Արևելյան գործընկերության միջոցով տարածաշրջանացման փորձերը ծրագրի մեկնարկին ընկալվում էին որպես հակամարտությունների կարգավորումը և տարածաշրջանային համագործակցությունը խթանող միջոցներ[23]: Սակայն ԵՄ-ի՝ որպես անվտանգային կարող գործընկերոջ մասին ընկալումների աստիճանական փոշիացումը և ԵՄ-ի որոշ անդամ պետությունների կողմից փոխբացառող աշխարհաքաղաքական ընտրությունների պարտադրումը հանգեցրին կառավարող էլիտայի՝ ԵՄ-ի հանդեպ վերաբերմունքի փոփոխությանը[24]: Դրան նպաստեց նաև ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների ռազմավարական բնույթը, խաղաղաշինական ջանքերի անարդյունավետությունը, ինչպես նաև Հունգարիայի կողմից Ռամիլ Սաֆարովի արտահանձնումը Ադրբեջանին: Այնուամենայնիվ, կառավարող էլիտան, հատկապես արտաքին քաղաքականության պատասխանատու ներկայացուցիչներն ակնկալում էին, որ ԵՄ-ի հետ ԱՀ և ԽՀԱԱՏ մասին համաձայնագրի կնքումը զգալի օգուտներ կբերեր Հայաստանին, և 2013 թ. սեպտեմբերի

---

[20] Տե՛ս Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Եվրամիության «Արեւելյան գործընկերության» գագաթնաժողովին, 7.5.2009, https://www.president.am/hy/press-release/item/2009/05/07/news-512/, դիտվել է 5.2.2021:

[21] Տե՛ս **Delcour L.,** Between the Eastern Partnership and Eurasian Integration: Explaining Post-Soviet Countries' Engagement in (Competing) Region-Building Projects, Problems of Post-Communism, Vol. 62, Issue 5, 2015, էջ 322:

[22] Տե՛ս Working visit of President Serzh Sargsyan to Marseille, 7.12.2011, Working visit of President Serzh Sargsyan to Marseillehttps // www.president.am/en/foreign-visits/item/2011/12/07/news-344/, դիտվել է 5.2.2021:

[23] Տե՛ս Վարշավայում Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Եվրամիության Արևելյան գործընկերության գագաթնաժողովին, 30.9.2011, https://www.president.am/hy/press-release/item/2011/09/30/news-1813/, դիտվել է 5.2.2021:

[24] Տե՛ս ЕС не требует от Армении сделать выбор в пользу европейской или евразийской интеграции, 21.4.2013, https://newsarmenia.am/news/politics/politics-20130321-42833019/, դիտվել է 5.2.2021:

3-ի Մաքսային միությանը անդամակցելու մասին հայտարարությունը նրանց համար նույնպես անակնկալ էր[25]:

Ընկալումների նման վերափոխումները ամփոփում են գործոնների այն համատեքստը, որը մղում էր էլիտային դիտարկելու ՌԴ-ն որպես ՀՀ կառուցվածքահամակարգային կարիքները բավարարելու հարցում անփոխարինելի ուժի: Այս ընկալման բյուրեղացումը կարևոր նշանակություն ունեցավ 2013 թ. եվրասիական ինտեգրացիոն ծրագրերին միանալու շրջադարձային որոշման ժամանակ: Այս ընտրության դրդապատճառները ուսումնասիրող Դելքուրը բերում է հետևյալ փաստարկը. «Թեև այս պետությունների որոշումն իրավացիորեն ձևավորվում է արտաքին դերակատարների խթանների և ճնշումների միջոցով, բայցևայնպես այն առաջին հերթին կախված է այն բանից, թե էլիտաներն ինչպես են մեկնաբանում այդ խթաններն ու ճնշումները»[26]:

Սարգսյանի գլխավորած էլիտայի՝ Հայաստանի կառուցվածքահամակարգային կարիքների հարցում Ռուսաստանի մասին ընկալումները հիմնականում արտացոլում էին նախորդ էլիտայի պատկերացումները: Ինչ վերաբերում է այդ կարիքները բավարարող ուժի (արտաքին հավասարակշռողի) ընտրությանը, ապա, ինչպես նշվեց, ի սկզբանե գլոբալ համակարգային մրցակցությունը կամ «արագ փոփոխվող աշխարհը» դիտվում էր որպես արտաքին քաղաքական հնարավորություն[27]: Նման ընկալումը բացառում էր երկընտրանքների օրակարգը և էլիտայի ընկալումներում թույլ տալիս տարբեր ուժային կենտրոնների հետ համագործակցության համատեղելիության հնարավորություն[28]: Դա էր պատճառը, ինչպես նկատում են որոշ հեղինակներ, որ մինչ 2013 թ. սեպտեմբերի 3-ը կառավարող էլիտան կարծում էր, որ Հայաստանը պետք է միմյանց փոխլրացնելու միջոցով ներգրավված լիներ եվրոպական և եվրասիական ինտեգրացիոն ծրագրերում՝ առանց դրանց անդամակցության[29]: ԵՄ-ին անդամակցության հավակնություններ չունենալը պայմանավորված էր այդ համատեքստում ՌԴ-ի շահերի առաջնահերթության քողարկված ընկալմամբ: Իսկ եվրասիական ծրագրերից ի սկզբանե խուսափելու հանգամանքը պայմանավորված էր դրանց անօգտավետության պրագմատիկ պատկերացմամբ[30]: Ըստ կառավարող էլիտայի՝ մի շարք առևտրատնտեսական հանգամանքներ, այդ թվում՝ ընդհանուր սահմանի բացակայությունը, աննպատակահարմար էին դարձնում ՀՀ-ի անդամակցությունը Մաքսային միությա-

---

[25] Տե՛ս **Delcour L.,** նշվ. աշխ., էջ 322-323:

[26] Նույն տեղում, էջ 317:

[27] Տե՛ս hetq.am, 21.01.2008:

[28] Տե՛ս **Gasparyan A.**, նշվ. աշխ., էջ 215:

[29] Տե՛ս **Галстян Н.,** Евразийская тематика на внутриполитической повестке Армении: позиции и оценки исполнительной власти и основных политических сил (аналитический обзор), Внешняя политика республики армения. Проблемы и вызовы. Научно-практическая конференция, посвященная 22-летию независимости РА (17 октября 2013 г.), ЕГУ, 2014, էջ 142:

[30] Տե՛ս Kommersant.ru, 04.04.2012:

նր[31]: Ինչպես նկատում է Գայստյանը, այս օրակարգի շուրջ ռուս գործընկերների հետ մի շարք հանդիպումներից հետո էլիտայի խոսույթը հրաժարումից անցում կատարեց համագործակցության՝ առանց անդամության[32]: Նման ձևաչափը կհամապատասխաներ էլիտայի համար նախընտրելի արտաքին քաղաքականությանը՝ ուղղությունների համատեղելիությանն ու փոխլրացմանը: Սակայն, ինչպես պնդում են որոշ հեղինակներ, եվրասիական ծրագրերին միանալու որոշումը մեծ բաց առաջացրեց ոչ միայն էլիտայի հռչակած բազմավեկտոր արտաքին քաղաքականության, այլև այդ քաղաքականության գիտական սահմանման միջև[33]: Եթե մինչ 2013 թ. սեպտեմբերի 3-ը ինտեգրացիայի վերաբերյալ էլիտայի խոսույթում գերակայում էին տնտեսական նպատակահարմարության մասին փաստարկները, ապա դրանից հետո գերակշռող դարձան անվտանգությամբ, Արցախի հիմնախնդրով, ինչպես նաև ԵՄ-ի կողմից պարտադրված «կամ-կամ»-ի գործոնով պայմանավորված հիմնավորումները[34], իսկ տնտեսական բաղադրիչը ձեռք բերեց ձևական բնույթ[35]: Ձևականն այն էր, որ եթե որոշումից մեկ տարի առաջ Մաքսային միությանը միանալը էլիտան համարում էր աննպատակահարմար, ապա դրանից հետո այն որակվեց ռազմավարական որոշում[36]: Այս համատեքստում հատկանշական է այն հանգամանքը, որ

---

[31] Շրջադարձային որոշման համատեքստում հաճախ է մեջբերվում 2013 թ. օգոստոսի 23-ին արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Քոչարյանի հարցազրույցը «Արմնյուզ» լրատվականին, որտեղ վերջինս պնդում է, որ Մաքսային միությանը ՀՀ անդամակցությունն աննպատակահարմար է (տե՛ս **Галстян Н.,** նշվ. աշխ., էջ 125): Այս հետազոտության ընթացքում, սակայն, թե՛ ԱԳՆ կայքում, թե՛ լրատվականի էջում տվյալ տեսահոլովակն անհասանելի էր:

[32] Տե՛ս **Галстян Н.,** նշվ. աշխ., էջ 123:

[33] Տե՛ս **Ն. Գալստյան,** Հայաստանի բազմավեկտոր արտաքին քաղաքականության հայեցակարգը և պրակտիկան, Հայաստանի Հանրապետության Պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, 2013, էջ 231:

[34] Հարկ ենք համարում նշել, որ, այնուամենայնիվ, 2013 թ. հետո ևս կարառավարող էլիտայի ընկալումներում ԵՄ-ն մնում էր արժեքային գործընկեր և դիտվում որպես ներքին կառուցվածքային թուլությունների հաղթահարման միջոց և աջակից (President.am, 2017): Ավելին՝ էլիտայի խոսույթում սկսեցին շրջանառվել Հայաստանի՝ որպես երկու ճամբարներին կապող «կամրջի» աշխարհաքաղաքական դերի մասին հայտարարությունները (տե՛ս «Կարեն Կարապետյանն ընդունել է ՄԹ արտաքին գործերի և համագործակցության նախարարության Եվրոպայի և Ամերիկաների հարցերով նախարարին», https://www.gov.am/am/news/item/13178/, ԵՄ-ԵԱՏՄ տնտեսական համագործակցության հեռանկարները՝ Բեռլինյան 5-րդ Արևելյան ֆորումի օրակարգում, https://mineconomy.am/news/497): Մանրամասն տե՛ս **Kotanjian H., Giragosian R., Lagutina M.,** & **Niculescu G**., Perspectives of Co-Existence of EU and EAEU Integration Processes: The Case of Armenia.– Yerevan: Political Science Association of Armenia, 2018:

[35] «Շարմազանով. Արտաքին քաղաքական ընտրությունը անվտանգության երաշխիքներով է պայմանավորված», news.am, 8.5.2014, https://news.am/arm/news/208248.html, դիտվել է 6.2021; **Gasparyan A.**, նշվ. աշխ., էջ 137; **Галстян Н.,** նշվ. աշխ., էջ 125-134:

[36] ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հարցազրույցը սլովենական «Delo» օրաթերթին, 10.3.2015, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2015/03/10/min-sl-delo/4889, դիտվել է 6.2.2021:

տնտեսական ինտեգրացիոն միությանը միանալու հիմնավորումներում էլիտայի որոշ անդամներ առաջնային նշանակություն էին տալիս ՀՀ-ՌԴ *երկկողմ* հարաբերություններում Ռուսաստանի՝ առաջին հերթին *ոչ տնտեսական* դերին և Հայաստանի համար դրա անփոխարելությանը[37]:

Նման որոշումից հետո կառավարող էլիտան ակնհայտորեն ակնկալում էր ՌԴ-ի աջակցության միջոցով արտաքին անվտանգային միջավայրի բարելավում, սակայն ռուս-ադրբեջանական ռազմատեխնիկական հարաբերությունների խորացումն ստեղծեց այլ իրականություն: Մինչ 2016 թ. «Ապրիլյան պատերազմը» կառավարող էլիտան այդ առիթով բազմիցս արտահայտել էր իր դժգոհությունը, սակայն հավել, որ ըմբռնումով է մոտենում գործարարական բնույթ կրող այդ կապին[38]: 2016 թ.-ից հետո էլիտայի խոսույթն այդ հարցում դարձավ առավել քննադատական, որի տրամաբանությամբ վարած արտաքին քաղաքականության արդյունքում, կարծես, Ռուսաստանն աստիճանաբար վերանայեց իր «just business» մոտեցումը: Այս և այլ դիպվածներում արտաքին քաղաքական քայլերի ծրագրման հարցում կարևոր նշանակություն ունեն պետության կարողությունների և նպատակների իրագործելիության մասին էլիտայի պատկերացումները՝ ինքնաընկալումը (անգլ.՝ self-perception): Կառավարող էլիտան բազմիցս հայտարարել էր, որ Ռուսաստանի կողմից Ադրբեջանին զենքի վաճառքը դադարեցնելու հարցում սեփական դերակատարությունը համարում է սահմանափակ[39]:

Այս համատեքստում հատկանշական է ՌԴ-ի նկատմամբ էլիտայի շրջանում ձևավորվող ընդհանուր դժգոհությունը, ակնկալիքների և արդյունքների անհամապատասխանությունը: Այդպիսով՝ Սերժ Սարգսյանի կարծիքով, Հայաստանի համար ՌԴ-ն չէր խաղում այն դերը, որը Թուրքիան զբաղեցնում էր Ադրբեջանի հետ հարաբերություններում[40]: Այս առումով թերևս կարելի է կասկածի տակ դնել նաև եղբայրության և դարավոր բարեկամության մասին հավաքական պատմույթի նկատ-

---

[37] Տե՛ս «ԵՏՄ-ին անդամակցելու որոշումը պայմանավորված է Հայաստանի և Արցախի հզորացմամբ. Շարմազանով», 3.12.2014, https://armenpress.am/arm/news/786364.html, դիտվել է 6.2.2021:

[38] Տե՛ս Сейран Оганян: Оружейная сделка между Баку и Москвой нам не страшна, 29.05. 2014, https://arminfo.info/index.cfm?objectid=56AF8E60-E707-11E3-871A0EB7C0D21663, դիտվել է 6.2.2021; **Arm Info,** Кочарян: Наивно считать, что одно государство, оставив в стороне свои интересы, будет руководствоваться интересами другого государства, 2.4.2016, https://arminfo.info/index.cfm?objectid=7135FD00-F894-11E5-A31F0EB7C0D21663, դիտվել է 6.2.2021:

[39] Տե՛ս «Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելի հետ», 6.4.2016, https://www.president.am/hy/press-release/item/2016/04/06/President-Serzh-Sargsyan-meeting-with-German-Chancellor-Angela-Merkel/; դիտվել է 6.2.2021; **Armenian Report,** Сейран Оганян сообщил, что ему «неприятно» от российско-азербайджанских сделок, 27,5,2014, https://armenianreport.com/pubs/84286/, դիտվել է 6.2.2021:

[40] Տե՛ս «Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելի հետ»:

մամբ կառավարող էլիտայի հրապարակայնորեն արտահայտած հավատարմությունը։ Դա նաև հիմնավորում է այն, որ կառավարող էլիտան եվրասիական ծրագրերին միանալու փաստը չէր համարում քաղաքակրթական որոշում՝ այդ դերը թողնելով ԵՄ-ին, իսկ ՄՄ-ին անդամակցելը համարում էր պրագմատիկ ընտրություն[41]։

Կառուցվածքահամակարգային գործոնների համատեքստում Ռուսաստանի դերի ընկալման նման տրամաբանությունը հուշում է նաև, որ էլիտայի համար բազմակողմ ձևաչափերում ևս ՌԴ-ն զբաղեցնում էր առաջնային դեր, իսկ այդ կազմակերպությունների «բազմակողմանիությունն» ուներ լրացնող նշանակություն։ Այդ ընկալման արմատավորմանն են նպաստել ՀԱՊԿ և ԵԱՏՄ գործընկերների կողմից դաշինքային քաղաքականությանը հակասող քայլերը։ Դա են վկայում նաև կառավարող էլիտայի կողմից արված այն հայտարարությունները, որոնցում արտահայտվում են ՀԱՊԿ գործընկերներից դաշինքային ակնկալիքների բացակայությունը և անվտանգային սպառնալիքների հավասարակշռման հարցում բացառապես սեփական կամ ՌԴ-ի ներուժին ապավինելու մոտեցումը[42]։ Ավելին՝ կառավարող էլիտայի շրջանում առկա էր ՀՀ–ի փոքր պետություն լինելու գիտակցումը, ըստ որի՝ պետության ուժերից վեր է ներազդել և փոխել համակարգային նման իրադրությունը։

Ամփոփելով Սերժ Սարգսյանի գլխավորած կառավարող էլիտայի վերաբերմունքը, ընկալումները (և դրանց էվոլյուցիան) ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա ազդող կառուցվածքահամակարգային գործոնների նկատմամբ, ինչպես նաև այդ ընկալումների ազդեցությունը ՀՀ արտաքին անվտանգության քաղաքականության ռուսական ուղղության ձևակերպման վրա՝ հարկ ենք համարում նշել, որ ի սկզբանե կառավարող էլիտան հարևան պետությունների հետ հարաբերությունների կարգավորումն ընկալել է որպես պետության կառուցվածքային խոցելիության հաղթահարման և տարածաշրջանային համակարգային միջավայրի բարելավման միջոց։ Այդ ուղղությամբ քայլերի տապալմանը զուգահեռ՝ նույն նպատակով կառավարող էլիտայի ընկալումներում բարձրացել էր ԵՄ-ի դերը։ Կառավարող էլիտան ԵՄ-ն համարում էր Հայաստանի արդիականացման գործիք և քաղաքակրթական մոդել։ Ձևավորվել էր ԵՄ-ի օգնությամբ տարածաշրջանային անվտանգության և կայունության ապահովման ակնկալիք։ Սպասելիքների չարդարացման և հիասթափության համա-

[41] Տե՛ս «Саргсян рассказал в Грузии, почему Армения решила вступить в ТС». Читать далее: https://sputnik-georgia.ru/georgia/20140619/216671450.html, 19.6.2014, https://sputnik-georgia.ru/georgia/20140619/216671450.html, դիտվել է 6.2.2021:

[42] Տե՛ս МИД: Армения в вопросах обороны должна надеяться только на себя, а не на ОДКБ, 15.4.2016, https://arminfo.info/full_news.php?id=15725&lang=2; «Ашотян: в случае внешней угрозы Армения может полагаться лишь на себя», 2.5.2016, https://ru.armeniasputnik.am/armenia/20160502/3253498.html, 2.5.2016, դիտվել է 6.2.2021:

տեքստում էլիտայի ընկալումներում վերահաստատվել է Հայաստանի կառուցվածքահամակարգային շահերի տեսանկյունից Ռուսաստանի անփոխարինելիության մասին այն համոզմունքը, որի վերափոխմանն էր ուղղված Սարգսյանի նախագահության առաջին տարիների արտաքին քաղաքականությունը: Այնպիսի դիպվածներում, ինչպիսին էր 2013 թ. ինտեգրացիոն երկընտրանքը, գլոբալ համակարգային գործոնների վերաբերյալ կառավարող էլիտայի նման փակուղային ընկալումներն արտաքին քաղաքականության ռուսական ուղղության ձևակերպման հարցում ունեցել են որոշիչ նշանակություն:

Թեև կառավարող էլիտայի հրապարակային հայտարարությունները իրավացիորեն հուշում են, որ 2013 թ. հետո ձևավորվել էին անվտանգային առավել լայն երաշխիքների և օգուտների սպասելիքներ, սակայն ՌԴ-Ադրբեջան խորացող ռազմատեխնիկական կապերն առաջ բերեցին նկատելի հիասթափություն: 2016 թ. «Ապրիլյան պատերազմից» հետո այն վերաճեց առավել հստակ արտահայտված դժգոհության: Դիպվածը նաև բյուրեղացրեց էլիտայի իրական ակնկալիքների բացակայությունը ՀԱՊԿ և ԵԱՏՄ անդամ դաշնակիցներից: Այն նաև ի ցույց դրեց այդ դաշինքների նկատմամբ էլիտայի հետաքրքրության միակ շարժառիթը՝ ՌԴ-ից ստացվող արտաքին հավասարակշռումը:

Կառավարող էլիտայի նշված ընկալումների վերափոխումներում կարմիր թելի նման անցնում է փոքր, թույլ և ազդեցության սահմանափակ լծակներ ունեցող պետության մասին ինքնարնկալումը: Ի լրումն կառուցվածքահամակարգային սահմանափակող գործոնների՝ սեփական կարողությունների նկատմամբ նման վերաբերմունքը ևս իր հերթին սահմանափակում է արտաքին անվտանգային քաղաքականության և մասնավորապես դրա ռուսական ուղղությամբ իրականացվող քայլերի միջակայքը, քանի որ դա հանգեցնում է քայլերի ապրիորի «գրաքննության»: Իհարկե, արտաքին քաղաքական քայլերի զտում տեղի է ունենում ցանկացած պարագայում, սակայն սեփական փոքրության մասին ինքնաընկալման սահմանափակումներից բխող քաղաքականության մուտքագրումը (input) բնականորեն սահմանափակում է ակնկալվող վերջնարդյունքների շրջանակը (output):

НАРЕК СУКИАСЯН – ***Восприятие безопасности правящей элиты Армении и её влияние на армяно-российские отношения в 2008-2018 гг.*** – В статье исследуется восприятие безопасности политической элитой Армении от российско-грузинской войны 2008 г. до периода после апрельской войны и вплоть до 2018 г. с применением конструктивистской методологии и концепции идентичности безопасности. Исследование опирается на выступления, интервью представителей правящей элиты, правительственные программы и соответствующие документы, а также предвыборные программы правящей партии РА, раскрывающие их восприятие структурных факторов (внутриструктурных, региональных, глобально-системных), влияющих на российское направление внешней политики Армении. В статье указывается, что изначально элита рассматривала нормализацию отношений с соседями как способ преодоления внутри-

структурных уязвимостей. Провал усилий в этом направлении привёл к росту значимости ЕС как средства модернизации и региональной стабильности. Поскольку и это направление не оправдало ожиданий, в глазах правящей элиты было восстановлено убеждение в незаменимой роли России. Ожидалось, что членство Армении в Евразийском экономическом союзе повысит безопасность Армении под эгидой российской региональной безопасности, однако активизация продаж Россией оружия Азербайджану породила недовольство правящей элиты, которое стало еще более выраженным после апрельской войны 2016 года.

Ключевые слова: *Внешняя политика Республики Армения, армяно-российские отношения, конструктивизм, идентичность безопасности, дискурсивный анализ, правящая элита Республики Армения*

NAREK SUKIASYAN – *The Security Perceptions of Armenia's Ruling Elite and Their Influence on Armenian-Russian Relations in 2008-2018.* – The article explores the security perceptions of Armenia's ruling political elite from the 2008 Russian-Georgian war to the post-April war period up to 2018 by applying constructivist methodology and the concept of security identity. The research relies on the speeches, interviews of the ruling elite, Government programs and relevant documents, and pre-election programs of the ruling Republic Party of Armenia that reveal their perceptions of the structural factors (domestic-structural, regional-security, global-systemic) affecting the Russian direction of Armenia's foreign policy. The article reveals that initially, the elite regarded the normalization of the relations with the neighbours as a way of overcoming domestic-structural vulnerabilities. The failure of the efforts in that direction resulted in the growth of the importance of the EU as means of modernization and regional stability. As this direction too did not meet the expectations, the belief of Russia's indispensable role was reinstated in the eyes of the ruling elite. While it was expected that Armenia's membership in Eurasian Economic Union would boost Armenia's security under Russia's regional security umbrella, the intensification of Russia's arms sales to Azerbaijan had been creating discontent among the ruling elite which only became more apparent after the 2016 "April war".

Key words: *Foreign policy of the Republic of Armenia, Armenian-Russian relations, constructivism, security identity, discourse analyses, ruling elite of the Republic of Armenia*